ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 520
21 դեկտեմբերի 2023 թվականի N - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 481-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետին փոխարինող Ա. Ոսկանյանի 21.12.2023թ. զեկուցագիրը՝

որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2023 թվականի նոյեմբերի 22-ի « Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբեր ամսին տեղահանված, Սյունիքի մարզի Սիսիան, Գորիս, Տաթև և Տեղ համայնքներում բնակություն հաստատած ընտանիքների համար անհրաժեշտ գույք ձեռք բերելու նպատակով գումար հատկացնելու մասին» N 481-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. Ղուկասյան**

2023թ. դեկտեմբերի 21
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290